ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## «ԲԱՄԲԱԿԱՇԱՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ»

## ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

# ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

## (2023-2028 ԹԹ.)


ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴ՝

ԳԱՅԱՆԵ ԳՐԻԳՈՐԻ ՊԱՐՈՆՅԱՆ


Սույն զարգացման ծրագիրը կազմվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի՝ 2022թ. սեպտեմբերի 22-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման ձևաչափը և զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողական ցուցանիշներն ու պահանջները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի հունվարի 15-ի №16-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» №35-Ա հրամանով հաստատված ձևաչափին և պահանջներին համապատասխան:



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**Բովանդակություն** ........ 2

**Ներածություն** ........ 3

**1. Ուսումնական հաստատության գործունեությունը** ........ 4

1.1. Ի՞նչ կրթական կարիքների է բավարարում ուսումնական հաստատությունը ........ 4

1.2. Ուսումնական հաստատությունը և պետության կրթական քաղաքականության միտումները, համայնքի, շահառու խմբերի կարիքներն ու հնարավորությունները ........ 10

1.3. Ուսումնական հաստատության ենթակառուցվածքները, մարդկային ռեսուրսները և հնարավորությունները ........ 11

**2. Ուսումնական հաստատության իրավիճակի վերլուծություն. ուժեղ և թույլ կողմեր** ........ 19

**3. Նպատակների, խնդիրների և ակնկալվող արդյունքների սահմանում** ........ 31

**4. Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումների ժամանակացույց** ........ 33

**5. Զարգացման ծրագրի կատարման արդյունքի գնահատման չափանիշներ** ........ 46

**6. Զարգացման ծրագրի իրականացման վերահսկողության մեխանիզմները** ........ 51

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ



*Հիմնվելով «Բամբակաշատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Ուսումնական հաստատություն կամ Դպրոց) իրավիճակի օբյեկտիվ վերլուծության և նախորդ տարիների կատարողականի գնահատականի վրա՝* ***սույն զարգացման ծրագրի նպատակն է նախանշել Ուսումնական հաստատության հետագա զարգացման ընթացքը և հստակեցնել Ուսումնական հաստատության առջև դրված խնդիրների արդյունավետ լուծմանն ուղղված միջոցառումների շրջանակը՝ ապահովելով դրա իրատեսական և չափելի իրականացումը:***



*Սույն զարգացման ծրագրի նպատակները բխում են.*

- *ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրով կրթության զարգացմանն ուղղված նպատակներից,*
- *Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագրից:*



*Զարգացման ծրագրի շրջանակը համապատասխանեցված է կրթության ոլորտում ՀՀ պետական քաղաքականության ռազմավարական առաջնահերթությունների հետ՝ արտացոլելով դրանց ներդաշնակ կապը պետական, համայնքային, հանրային և մասնավոր կարիքների, ինչպես նաև համաշխարհային զարգացման միտումների հետ:*

# 1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

## 1.1. Ի՞նչ կրթական կարիքների է բավարարում ուսումնական հաստատությունը



- Ուսումնական հաստատության **գործունեության նպատակը** *յուրաքանչյուր երեխայի, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ), զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշչով սահմանված արդյունքների ապահովումն է:*
- Ուսումնական հաստատության **տեսլականն** է *քաղաքակիրթ, ստեղծագործ և ստեղծարար, նախաձեռնող, կարողունակ և մրցունակ, ժամանակին համահունչ քայլող սերունդի թողարկումը, որն իր մեջ կկրի հայրենասեր ու պետականապաշտ քաղաքացու բարձրագույն, ինչպես նաև համամարդկային հիմնարար արժեքները:*
- Ուսումնական հաստատության գործունեությունը *հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, հանրամատչելիության, թափանցիկության, անձի ազատ զարգացման, ինքնավարության և կրթության աշխարհիկ բնույթի պահպանման, ինչպես նաև ազգային և համամարդկային արժեքների զուգորդման սկզբունքների վրա:*

Դպրոցն ուղղված է սովորողների ընդհանուր և հատուկ կրթական կարիքների բավարարմանը, ինչն իրականացվում է տարբեր ուղղություններով և մակարդակներում.

- ***կառավարում.*** ուղղված է սովորողների կրթական կարիքների բացահայտմանն ու նկարագրմանը, դրանց բավարարմանն ուղղված գործողությունների ճանապարհային քարտեզի մշակմանն ու արդյունավետ իրագործմանը,
- ***ուսումնադասավանդական աշխատանքներ.*** համարվում են սովորողների կրթական կարիքների բավարարման բուն գործընթացը, իրականացվում են ուսուցչամանկավարժական անձնակազմի կողմից՝ ընդգրկելով ինչպես բուն ուսումնական պրոցեսը, այնպես էլ հարակից սոցիալական և մարզամշակութային միջոցառումները, առանձին սեմինար-քննարկումներն ամենատարբեր հարցերի շուրջ,
- ***վարչատնտեսական գործունեություն.*** ուղղված է ուսումնական գործընթացի կազմակերպման համար նպաստավոր միջավայրի պահպանմանն ու զարգացմանը՝ Դպրոցի հնարավորությունների օբյեկտիվ գնահատման հիման վրա,
- ***աշխատանքներ ԿԱՊԿՈՒ սովորողների հետ.*** իրականացվում են դպրոցի հոգեբանի և ուսուցչի օգնականների գործուն ներգրավվածությամբ, Արմավիրի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի հետ ակտիվ համագործակցությամբ:

Համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010թ. դեկտեմբերի 22-ի №1727 Ա/Ք հրամանով տրված լիցենզիաների՝ Դպրոցն իրավունք ունի՝ իրականացնելու տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթական ծրագրեր՝ աշակերտների հետևյալ սահմանչափերով.




**Գծապատկեր 1.** Դպրոցի կողմից իրականացվող ընդհանուր կրթական ծրագրերը

Համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի 2018թ. փետրվարի 8-ի №103 Ա/2 հրամանով տրված լիցենզիայի՝ դպրոցն իրավունք ունի՝ իրականացնելու նաև նախադպրոցական կրթական ծրագիր մինչև 25 երեխայի համար.




**Գծապատկեր 2.** Դպրոցի կողմից իրականացվող նախակրթական ծրագիրը




| | 2018-2019 ուստարի | 2019-2020 ուստարի | 2020-2021 ուստարի | 2021-2022 ուստարի | 2022-2023 ուստարի |
|---|---|---|---|---|---|
| **Ընդամենը** | 394 | 392 | 400 | 395 | 398 |

**Գծապատկեր 3**. Դպրոցի աշակերտների թիվը, 2018-2023թթ.

Դպրոցի ***3 աշակերտ ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք***, որոնց հետ ըստ կարիքի տարվում է համապատասխան աշխատանք հոգեբանի և ուսուցչի օգնականների միջոցով:

Դպրոցում ***սովորում է 23 այլազգի (եզդի) աշակերտ***, և երաշխավորված է ազգային պատկանելիության հիմքով խտրականության ցանկացած դրսևորման բացառումը ինչպես ուսումնական գործընթացում, այնպես էլ առօրյա կյանքում և Դպրոցի անձնակազմ-աշակերտ և աշակերտ-աշակերտ հարաբերություններում:

Իրավապահ մարմինների ներկայացուցիչների, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալի, խորհրդակցական մարմինների անդամների, հոգեբանի և դասղեկների կողմից հետևողական աշխատանքներ են տարվում սովորողների իրավունքների և պարտականությունների ներկայացման և արդյունավետ իրացման ուղղությամբ. կազմակերպվում են առանձին հանդիպում-քննարկումներ, որոնց շրջանակներում հատուկ ուշադրություն է դարձվում ***հալածանքի (այդ թվում՝ մեդիայի միջոցով), օպարման և բռնության դրսևորումների բացառմանը,*** Դպրոցում բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի պահպանմանը:

Չնայած սովորողների բարձր առաջադիմությանը՝ Դպրոցի առաջ խնդիր է դրված՝ բարձրացնելու սովորողների ուսման որակը, քանի որ վերջին տարիներին այն տպավորիչ արդյունք չի ունեցել:




**Գծապատկեր 4**. Սովորողների առաջադիմությունը և որակը, 2018-2022թթ., տոկոս

2014 թվականից Դպրոցն ընդգրկվել է Պարենի համաշխարհային ծրագրի հայաստանյան գրասենյակի աջակցությամբ իրականացվող ***«Դպրոցական սնունդ»*** ծրագրում, որի շրջանակներում կազմակերպվել է նախակրթարանի և տարրական դպրոցի սովորողների համար ամենօրյա տաք սննդի ապահովում:

Ուսումնական հաստատությունը սովորողների համար ապահովում է հետևյալ հնարավորությունները.

- որակյալ և ժամանակակից հանրակրթության ստացում,
- անձի ինքնադրսևորման, ինքնաարտահայտման ու ինքնազարգացման նպաստավոր միջավայր,
- մարզամշակութային կյանքի ներգրավվածություն,
- ապագա մասնագիտական կողմնորոշում ձևավորող միջավայր:

2023-2024 ուստարուց սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքներում ընտանիքին համակողմանի օգնություն ցուցաբերելու, դասապատրաստումներին աջակցելու, ինքնուրույն սովորելու կարողությունները, ստեղծագործական ունակությունները զարգացնելու նպատակով նախատեսվում է Դպրոցում կազմակերպել ***երկարօրյա ուսուցում՝*** սովորողների և նրանց ծնողների կարիքների ուսումնասիրության հիման վրա: Դպրոցում երկարօրյա ուսուցման կազմակերպման առջև դրվելու են հետևյալ խնդիրները.

1. տնային պայմաններում երեխայի կրթական աջակցության անհնարինության դեպքում այդ գործընթացները կազմակերպել դպրոցի ուսումնանյութական բազայի հիման վրա, այդ թվում՝ այլ հանրակրթական ուսումնական հաստատություններ հաճախող սովորողների համար,
2. արտադասարանական աշխատանքներին սովորողների ակտիվ մասնակցության ապահովման միջոցով ստեղծել երեխայի ստեղծագործական ունակությունների զարգացման անհրաժեշտ պայմաններ,
3. ԿԱՊԿՈՒ (այդ թվում՝ ցածր առաջադիմությամբ) սովորողների համար մատուցել լրացուցիչ կրթական ծառայություններ:

2023-2024 ուստարում Դպրոցի 2-րդ, 5-րդ, 7-րդ և 10-րդ դասարանների ուսումնական պլանը կազմվելու է ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի N 136-Ն որոշմամբ նոր խմբագրությամբ շարադրված հանրակրթության պետական չափորոշչի համաձայն: Նոր ուստարում այդ դասարաններում դասավանդող ուսուցիչները անցել են համապատասխան վերապատրաստում:

## 1.2. Ուսումնական հաստատությունը և պետության կրթական քաղաքականության միտումները, համայնքի, շահառու խմբերի կարիքներն ու հնարավորությունները

Ուսումնական հաստատության գործունեությունը կարգավորվում է հանրակրթության ոլորտում ազգային օրենսդրությամբ և արտացոլում է պետության կրթական քաղաքականության միտումները՝ ձևավորելով պետության ու համայնքի զարգացմամբ մտահոգ ու նախաձեռնողական սերունդ:

Ուսումնական հաստատությունը սերտորեն համագործակցում է պետական ու համայնքային մարմինների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության հետ, ինչը դրսևորվում է վերջիններիս կողմից կազմակերպվող ամենատարբեր նախաձեռնություններում ակտիվ ներգրավմամբ: Համայնքի և Ուսումնական հաստատության համագործակցությամբ կազմակերպվում են միջոցառումներ, հանդիպումներ, սեմինար-քննարկումներ, ճանաչողական էքսկուրսիաներ, շաբաթօրյակներ, որոնք նպաստում են սովորողների սոցիալական-քաղաքացիական պատասխանատվության և կարողունակության զարգացմանը, սովորողների մոտ վաղ տարիքից ձևավորում են պետության և համայնքի նկատմամբ հոգատար վերաբերմունք:

Զարգացման ծրագիրը նպատակադրում է ապահովել արդեն մեկնարկած միջոցառումների շարունակականությունը՝ միևնույն ժամանակ խթանելով Դպրոցի ուսուցչամանկավարժական և աշակերտական համակազմի նախաձեռնողականությունը նոր միջոցառումների կազմակերպման ուղղությամբ:

Զարգացման ծրագրի՝ համայնքի և շահառու խմբերի կարիքներին համապատասխանությունն ապահովելու նպատակով իրականացվել են քննարկումներ և մտքերի փոխանակում մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդների հետ:

## 1.3. Ուսումնական հաստատության ենթակառուցվածքները, մարդկային ռեսուրսները և հնարավորությունները

***<u>Ուսումնական հաստատության շենքային պայմանները.</u>***

Ուսումնական հաստատության շենքը տիպային երկմասնաշենք կառույց է՝ 650 աշակերտ նախագծային հզորությամբ և հարմարեցված կրթական ծրագրեր իրականացվող ուսումնական հաստատությունների պահանջներին:

Ուսումնական հաստատության տարածքն ընդգրկում է 26 առարկայական կաբինետ (այդ թվում՝ 2 համակարգչային և 1 նախնական զինպատրաստության), 7 դասասենյակ, 3 առանձնասենյակ, 1-ական գրադարան-ընթերցասրահ, լաբորատորիա, սպորտդահլիճ և մարզադաշտ, զենքի պահեստ, արհեստագործական սենյակ, նիստերի դահլիճ, բուժսենյակ, ճաշարան, 2-ական սանհանգույց և նկուղ, 4 հանդերձարան:

Ուսումնական հաստատությունն ապահովված է կենտրոնացված ջեռուցմամբ և ինտերնետային կապով: Ուսումնական հաստատության ամբողջ տարածքն ապահովված է շուրջօրյա տեսահսկողությամբ:

Դպրոցի շենքային պայմանները գտնվում են լավ վիճակում, հետևողականորեն՝ ըստ անհրաժեշտության, իրականացվում է կոսմետիկ վերանորոգում: Գործնական ուսուցման կազմակերպման ենթակառուցվածքները (լաբորատորիաներ, դահլիճ,

մարզադահլիճ, առարկայական կաբինետներ, ճաշարան, բուֆետ) գտնվում են լավ վիճակում և ունակ են ապահովելու ուսուցման պրոցեսի բնականոն ընթացքը:

Վերջին տարիներին հետևողականորեն իրականացվել են Ուսումնական հաստատության տարածքի արդիականացում և գույքի թարմացում. սալիկապատվել է բակը, կատարվել է քարե պարսպապատում, տեղադրվել են տաղավարներ նախակրթարանի սաների համար, բոլոր դասասենյակների և կաբինետների համար ձեռք է բերվել նոր գույք (աշակերտական սեղաններ և աթոռներ, պահարաններ), տեղադրվել են օդորակիչներ:

***<u>Ուսումնական հաստատության նյութատեխնիկական բազան.</u>***

Ուսումնական հաստատությունը հագեցած է կրթական ծրագրեր իրականացնելու համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով: Վերջին տարիներին հետևողականորեն ձեռք են բերվել նաև համակարգչային սարքավորումներ, այդ թվում՝ համակարգիչներ և դյուրակիր համակարգիչներ (նոթբուք), էլեկտրոնային գրատախտակներ, լուսացրիչներ, տպիչներ:

**Աղյուսակ 1.** Դպրոցի նյութատեխնիկական բազան

| | | |
|---|---|---|
|  | 10 հավաքածու | Համակարգիչները տեղադրված են 2 համակարգչային կաբինետներում, գրադարան-ընթերցասրահում, վարչական աշխատողների աշխատասենյակներում: |
|  | 7 հատ | Նոթբուքները տրամադրված են վարչական աշխատողներին և մնացած անձնակազմին՝ ըստ անհրաժեշտության: |
|  | 3 հատ | Պլանշետներն օգտագործվում են կազմակերպվող միջոցառումների ժամանակ և նախատեսված են ինչպես ուսուցիչների, այնպես էլ աշակերտների համար: |

| | | |
|---|---|---|
|  | 4 հատ | Լուսացրիչները տեղադրված են 2 համակարգչային կաբինետներում, գրադարան-ընթերցասրահում և հանդիսությունների դահլիճում: |
|  | 3 հատ | Էլեկտրոնային ինտերակտիվ գրատախտակներով հագեցած են համակարգչային 2 կաբինետներն ու գրադարան-ընթերցասրահը: |
|  | 5 հատ | Համակարգիչ-մոնիտորները տեղադրված են վարչական աշխատասենյակներում, համակարգչային կաբինետում և նախակրթարանում: |
|  | 1 համակարգ | Դպրոցի տարածքն ապահովված է շուրջօրյա տեսահսկողական անվտանգության համակարգով՝ 20 տեսախցիկով: |
|  | 4 հատ | Օդորակիչները տեղադրված են վարչական աշխատասենյակներում և հանդիսությունների դահլիճում: |
|  | 1 հավաքածու | Դպրոցի սպորտդահլիճը հագեցած է համապատասխան մարզական գույքով՝ գնդակներ, պտտաձող, մարմնամարզական կամրջակ և ցատկերի սարք, մագլցման պարաններ, սեղանի թենիս և այլն: |
|  | 3 հատ | Դպրոցն ունի 2 դաշնամուր և 1 երաժշտական կենտրոն, որոնք օգտագործվում են երաժշտական դասերի և միջոցառումների ընթացքում: |
|  | 1 հավաքածու | Դպրոցում առկա են ամբողջական կահավորված խոհանոց, սննդի պահեստ ու ճաշարան՝ նախատեսված նախակրթարանի և տարրական սննդի երեխաների համար տաք սննդի կազմակերպման համար: |

Առկա նյութատեխնիկական բազան գտնվում է սարքին վիճակում և ենթակա է շահագործման, առկա անսարքությունները Դպրոցի հոգատար անձնակազմի կողմից հետևողականորեն վերացվում են, կամ անսարք գույքը փոխարինվում է նորով:

Դպրոցում առանձնակի ուշադրություն է դարձվում արդի կրթական մեթոդների և ժամանակակից դասապրոցեսի կազմակերպմանը, և այդ ուղղությամբ Դպրոցի հնարավորությունները զարգացնելու նպատակով հետևողականորեն ձեռք են բերվում նոր տեխնիկա և համակարգչային միջոցներ: Հաշվի առնելով ինտերակտիվ դասերի կազմակերպման անհրաժեշտությունն ու պահանջարկի ավելացումը՝ վերջին տարիներին Դպրոցում ձևավորվել ու կահավորվել է նոր՝ երկրորդ համակարգչային կաբինետը, որը հնարավորություն է տալիս՝ կազմակերպելու դասապրոցեսներ՝ ՏՀՏ միջոցների կիրառմամբ:

***<u>Ուսումնական հաստատության մարդկային ռեսուրսները.</u>***

Ուսումնական հաստատությունն ունի 50 աշխատակից: 2 ուսուցիչ ունի միջին մասնագիտական, մնացածը՝ բարձրագույն մասնագիտական կրթություն և ատեստավորված են: *Բարձրագույն կրթություն չունեցող ուսուցիչները պատրաստվում են կամավոր ատեստավորման:* 2 ուսուցիչ ունի առաջին աստիճանի տարակարգ, իսկ կամավոր ատեստավորում է անցել 3 ուսուցիչ, որոնք ստանում են հավելավճար:




**Գծապատկեր 5**. Դպրոցի մարդկային ռեսուրսները, 2023թ.

Ուսուցիչների թվում առկա են Մովսես Խորենացու մեդալով, ՀՀ ազգային ժողովի մեդալով և պատվոգրով, ՀՀ կրթության և գիտության նախարարության հուշամեդալով պարգևատրված ուսուցիչներ: Դպրոցի տարածքում ապահովված է ուսուցչական անձնակազմի ինքնակրթության բարենպաստ միջավայր. առկա է համացանցի հասանելիություն դպրոցի ամբողջ տարածքում, յուրաքանչյուր երկրորդ ուսուցչի հաշվով հասանելի է մեկ համակարգիչ կամ նոթեբուք:

Դպրոցի անձնակազմի արժևորման և խրախուսման նպատակով նախատեսվում է ***կատարողականի հիման վրա բազմաչափ նոր համակարգի ներդրում,*** որի հիմքում ընկած կլինեն աշխատողի ինքնակրթությունը, մասնագիտական զարգացումը, նախագծային աշխատանքների որակը, տարբեր միջոցառումների կազմակերպումը և նախաձեռնողականությունը գնահատող չափանիշներ, ինչպես նաև սովորողների գրանցած արդյունքները տարբեր մրցույթներում:

Ուսումնական հաստատությունը ***վերապատրաստման կենտրոն է,*** և ներկայում «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից իրականացվում է հանրակրթական դպրոցների տնօրենների, տնօրենների տեղակալների և ուսուցիչների վերապատրաստում հանրակրթության պետական չափորոշչին և առարկայական ծրագրերին համապատասխան, որում որպես վերապատրաստող ներգրավված են նաև դպրոցի տնօրենը և ուսուցիչները:

***<u>Ուսումնական հաստատության խորհրդակցական մարմինները</u>.***

Ուսումնական հաստատության կառավարման գործում ներգրավված են կառավարման և խորհրդակցական հետևյալ մարմինները, որոնք գործում են օրենսդրությամբ և Ուսումնական հաստատության կանոնադրությամբ նախատեսված իրենց իրավասությունների սահմաններում.

1. *կառավարման խորհուրդ,*
2. *մանկավարժական խորհուրդ,*
3. *ծնողական խորհուրդ,*

4. *աշակերտական խորհուրդ,*
5. *հոգաբարձուների խորհուրդ:*

Դպրոցի կառավարման խորհուրդն ակտիվորեն ներգրավված է Դպրոցի կառավարման հարցում, երաշխավորված է տնօրեն-կառավարման խորհուրդ արդյունավետ համագործակցությունը: Կառավարման խորհրդի նիստերի շրջանակներում Դպրոցի տնօրենը ներկայացրել, և քննարկվել են.

- ամենամյա ծախսերի նախահաշիվը, հաջորդ բյուջետային տարվա ֆինանսավորման հայտը, հաստիքային և տարիֆիկացիոն ցուցակները,
- ֆինանսատնտեսական, ուսումնադաստիարակչական գործունեության, այդ թվում՝ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների իրականացման մասին հաշվետվությունները,
- Դպրոցի զարգացման ծրագրի կատարողականը:

Հաշվետու ժամանակաշրջանում (2023-2028թթ.) Դպրոցի տնօրեն-կառավարման խորհուրդ համագործակցությունն իրականացվելու է կողմերի վերանայված լիազորությունների շրջանակներում՝ «Հանրակրթության մասին» ՀՀ նոր օրենքի շրջանակներում: Նախատեսվում են խորհրդի աջակցությամբ զարգացման ծրագրի կատարումը, Դպրոցի կազմակերպական կառուցվածքի, ներքին կարգապահական, (այդ թվում՝ աշխատողների և սովորողների վարքագծի) կանոնների հաստատումը, ուսումնադաստիարակչական գործունեության (այդ թվում՝ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների իրականացման) մասին հաշվետվությունների, ներքին և արտաքին գնահատման արդյունքների քննարկումը:

***<u>Ուսումնական հաստատության ֆինանսական գործունեությունը</u>.***

Ուսումնական հաստատության ֆինանսական գործունեության հիմնական նպատակը սովորողների ուսումնական գործընթացի համար անհրաժեշտ միջավայրի ձևավորումն ու զարգացումն է սահմանափակ ֆինանսական ռեսուրսների

պայմաններում: Այս իմաստով Դպրոցի առջև խնդիր է դրված՝ բարձրացնելու ֆինանսավորման պլանավորման և ծախսման արդյունավետությունը, ծախսային ուղղությունները համապատասխանեցնելու Դպրոցի և սովորողների կրթական կարիքներին:

Դպրոցի ֆինանսավորումն իրականացվում է հիմնադրի՝ Հայաստանի Հանրապետության կողմից՝ պետական բյուջեի միջոցներից: Ֆինանսավորման չափը ձևավորվում է ըստ իրականացվող հանրակրթական ծրագրերի՝ կախված սովորողների թվից, իսկ 2023 թվականի սեպտեմբերից կիաշվարկվի դասարանների թվով:

Դպրոցին հատկացված ֆինանսական միջոցները ծախսվում են՝ ելնելով Դպրոցի կարիքներից ու հնարավորություններից: Ֆինասատնտեսական գործունեությունը հստակ է և թափանցիկ:




| | 2018թ. | 2019թ. | 2020թ. | 2021թ. | 2022թ. | 2023թ. |
|---|---|---|---|---|---|---|
| Ընդամենը | 90,108.6 | 99,380.8 | 102,656.9 | 102,220.7 | 100,758.1 | 73,752.9 |

**Գծապատկեր 6**. Դպրոցի ֆինանսական ցուցանիշները, 2018-2023թթ.

Դպրոցի բյուջեի ծախսման հիմնական ուղղությունն աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների կատեգորիան է, որին ուղղվում է տարեկան ֆինանսավորման շուրջ 85 տոկոսը, էլեկտրամատակարարման և ջեռուցման ծախսերին է ուղղվում բյուջեի շուրջ 4 տոկոսը:




**Գծապատկեր 7**. Դպրոցի բյուջեի ծախսային կատեգորիաները, 2022թ.

Դպրոցի առկա ֆինանսական խնայողությունը հնարավորություն է տվել 2022թ. ընթացքում վերանորոգել Դպրոցի մեկ մասնաշենքի ջեռուցման համակարգը, ինչի շնորհիվ ապահովվել է Դպրոցի ամբողջական ջեռուցումը, և պահպանվել է ուսուցման կազմակերպման կաբինետային ձևաչափը:

Առկա հնարավորությունների պարգայում մշտապես ձեռք է բերվել համակարգչային նոր տեխնիկա, ինտերակտիվ դասապրոցեսի կազմակերպման համար անհրաժեշտ այլ տեխնոլոգիաներ:

# 2. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ. ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

### *2.1. Ուսումնական հաստատության շենքային պայմանները.*

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| • Ուսումնական հաստատությունն ապահովված է կրթական գործունեության ապահովման համար անհրաժեշտ լուսավոր, ընդարձակ և հարմարավետ շենքային պայմաններով, որոնք հետևողականորեն արդիականացվում են:<br>• Կրթական գործունեության կազմակերպման համար առկա են հիմնանորոգված դասասենյակներ և կաբինետներ, սպորտդահլիճ և մարզադաշտ՝ հանդերձարաններով, համակարգչային կաբինետներ, դահլիճ, մասնագիտացված ՆԶՊ և առարկայական կաբինետներ, լաբորատորիաներ, գրադարան-ընթերցասրահ, աշխատասենյակներ վարչական աշխատողների համար. բոլոր կաբինետներն ու սենյակները ձևավորված ու կահավորված են նոր գույքով:<br>• Դպրոցն ունի ճաշարան ու խոհանոց՝ տաք սնունդ տրամադրելու համար, որին մասնակցում է տարրական դպրոցի և նախակրթարանի 180 սան:<br>• Առկա են ջեռուցման և շուրջօրյա տեսահսկողության համակարգեր, գրաֆիկով կենտրոնացված ջրամատակարարում (տեղադրված են ջրի պոմպակայան և պահեստային ջրի տարաներ), ինտերնետային կապ, եռաֆազ հոսանքի մատակարարում: | • Դպրոցի մի բակն ունի վերանորոգման կարիք, տարածքի ցանկապատի մի մասն ունի վերականգնման կարիք:<br>• Դպրոցը չունի շուրջօրյա ջրամատակարարման և ջրահեռացման համակարգեր:<br>• Դպրոցի տարածքում գտնվող արհեստանոցը գտնվում է վթարային վիճակում, ինչով պայմանավորված՝ չի օգտագործվում:<br>• Դպրոցի մարզադաշտն ունի ցանկապատի վերանորոգման և արդիականացման կարիք:<br>• Դպրոցի ապաստարանը հիմնանորոգման կարիք ունի և ընդարձակ չէ: |

*2.2. Ուսումնական հաստատության նյութատեխնիկական բազան.*

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| • Ուսումնական հաստատությունը հագեցած է կրթական ծրագրեր իրականացնելու համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով. առկա են 10 համակարգիչ, 7 դյուրակիր համակարգիչ (նոթբուք), 3 էլեկտրոնային ինտերակտիվ գրատախտակ, 4 լուսացրիչ, մարզամշակութային գույք և այլն:<br>• Դպրոցի տարրական դպրոցի և նախակրթարանի սաների համար կազմակերպվում է ամենօրյա տաք սննդի տրամադրում, որի նպատակով հատկացվել և կահավորվել են խոհանոց, ճաշարան և սննդի պահեստ: Առկա են սառնարաններ, գազօջախներ, պահարաններ, սեղաններ, աթոռներ, լվացարաններ, ջեռոց, խմորհունց և այլն:<br>• Դպրոցն ապահովված է շուրջօրյա տեսահսկողության անվտանգության համակարգով՝ 20 տեսախցիկով: | • Գրադարանը կարիք ունի նոր (այդ թվում՝ օտարալեզու) գրականությամբ հագեցվածության:<br>• Գրադարանում գրքերի տրամադրման արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է ունենալ առկա գրականության էլեկտրոնային հաշվառում:<br>• Թվային գրականության հասանելիությունն ապահովելու նպատակով գրադարան-ընթերցասրահի համար անհրաժեշտ է ձեռք բերել նոր համակարգիչներ:<br>• Ժամանակակից դասասրահի կազմակերպման անհրաժեշտության աճին զուգահեռ՝ Դպրոցն ունի նոր համակարգչային տեխնիկայի ձեռք բերման կարիք: |

*2.3. Համագործակցությունը Ուսումնական հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինների հետ.*

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| • Դպրոցի կառավարման խորհրդի անդամները առաջադրվել են լիազորված մարմնի, մանկավարժական խորհրդի, ծնողական խորհրդի և ՏԻՄ ղեկավարի կողմից, ինչի շնորհիվ երաշխավորված են խորհրդի ինքնավարությունը, իր գործողություններում ազատ լինելու հնարավորությունը և անկաշկանդվածությունը:<br>• Դպրոցի կառավարման խորհուրդն ակտիվորեն ներգրավված է Դպրոցի կառավարման գործում, կազմակերպվում են խորհրդի նիստեր, որոնց ընթացքում քննարկվում են Դպրոցի կառավարման օրակարգային հարցերը:<br>• Դպրոցի տնօրենը ներկայացնում, և կառավարման խորհուրդը քննարկում է Դպրոցի գործունեությանը վերաբերող հարցեր:<br>• Կառավարման խորհուրդը վերահսկողություն է իրականացնում Դպրոցի զարգացման ծրագրի կատարման նկատմամբ:<br>• Դպրոցի մանկավարժական խորհուրդը ակտիվորեն ներգրավված է հանրակրթության պետական չափորոշչին համապատասխան հանրակրթական ծրագրերի իրականացման գործում, հայտնում է իր դիրքորոշումը ուսումնական գործընթացին վերաբերող հարցերի առնչությամբ, ընդունում որոշումներ օրակարգային հարցերի մասին:<br>• Դպրոցի ծնողական խորհուրդը կապող օղակ է հանդիսանում Դպրոցի և ծնողական համայնքի միջև, ապահովում է ծնողների ներգրավվումը սովորողների արտադպրոցական աշխատանքներում, երաշխավորում է երեխայի իրավունքների պաշտպանությունը դպրոցում: | • Դպրոցը չունի շրջանավարտների խորհուրդ:<br>• Դպրոցի հոգաբարձուների խորհուրդն աչքի է ընկնում իր գործունեության պասիվությամբ:<br>• Աշակերտական խորհուրդը բավարար չափով ակտիվ չէ, հաճախ հանդես չի գալիս սեփական նախաձեռնություններով: |

| | |
|---|---|
| • Դպրոցի աշակերտական խորհուրդն օժտված է սովորողների ինքնավարության ու ինքնակառավարման լիազորություններով, ներգրավված է Դպրոցի գործունեության կազմակերպման գործում, երաշխավորված են սովորողներին վերաբերող հարցերի շուրջ աշակերտական խորհրդի՝ ազատ կարծիք հայտնելու և կամաարտահայտության իրավունքները: | |

***2.4. Ուսումնական հաստատության համագործակցությունը ՏԻՄ-ի, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ.***

| **Ուժեղ կողմեր** | **Թույլ կողմեր** |
|---|---|
| • Դպրոցը համագործակցում է ՀՀ կառավարության, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, Արմավիրի մարզպետի աշխատակազմի, Մեծամորի համայնքապետարանի, Բամբակաշատ գյուղի վարչական ղեկավարի, ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության, ՀՀ պաշտպանության նախարարության, «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի, Գնահատման և թեստավորման կենտրոնի, Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի, մարզային և համայնքային գրադարանների, Արմավիրի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի, այլ դպրոցների, հասարակական կազմակերպությունների հետ: | • Բնակավայրից դուրս կազմակերպվող միջոցառումների մասնակցության բարդություններ՝ պայմանավորված աշակերտներին տեղափոխելու տրանսպորտային սահմանափակումներով:<br>• Համայնքային մակարդակում կրթական և մարզամշակութային նախաձեռնությունների սահմանափակ թիվ:<br>• Համագործակցության բացակայություն արտերկրի ուսումնական հաստատությունների հետ:<br>• Ծնողական համայնքը չունի բավարար սեփական նախաձեռնողականություն, աշխատանքները կազմակերպվում են |

| | |
|---|---|
| • Դպրոցի թե՛ աշակերտական, թե՛ մանկավարժական անձնակազմն ակտիվորեն ներգրավված է պետական և համայնքային միջոցառումներին (շաբաթօրյակ, ծառատունկ, սեմինարներ և այլն):<br>• Արտադրպրոցական աշխատանքների իրականացման ժամանակ տարվում են աշխատանքներ ծնողական համայնքի ներկայացուցիչների հետ, իրականացվում է վերջիններիս ներգրավումը համայնքից դուրս կատարվող նպատակային այցերում: | ուսուցչամանկավարժական անձնակազմի կողմից: |

### 2.5. *Ուսումնական հասպապրության ուսումնական միջավայրը.*

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| • Դպրոցի ուսումնական միջավայրը հարմարավետ է, ընդարձակ ու լուսավոր, վերանորոգված և պատշաճ կահավորված, լոկալ ջեռուցմամբ ապահովված:<br>• Դպրոցի ողջ տարածքն ապահովված է լարային և անլար ինտերնետային կապով:<br>• Դպրոցի միջանցների պատերը հագեցած են նկարներով, ուսումնական պաստառներով, պարբերաբար կազմակերպվում են ցուցահանդեսներ, իրականացվում են թեմատիկ ձևավորումներ:<br>• Ապահովված են սովորողների առողջության ու անվտանգության պահպանման նորմերը, մշտապես հսկվում է տարածքի սանիտարահիգիենիկ վիճակը:<br>• Դպրոցի 100-ամյակի կապակցությամբ դպրոցի բակում տեղադրված է գրքի արձան: | • Դպրոցի շենքը չունի տեղաշարժման սահմանափակումներ ունեցող անձանց համար նախատեսված հարմարություններ (թեքատախտակներ): |

*2.6. Ուսումնական մանկավարժական համակազմի մասնագիտական որակները.*

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| • Դպրոցի բոլոր ուսուցիչները՝ բացառությամբ երկուսի, ունեն բարձրագույն մասնագիտական կրթություն և ատեստավորված են: Բարձրագույն կրթություն չունեցող ուսուցիչները պատրաստվում են կամավոր ատեստավորման:<br>• Դպրոցի մանկավարժական համակազմը շարունակաբար մասնակցում է մասնագիտական որակավորումների բարձրացմանն ուղղված դասընթացների, սեմինարների և վեբինարների:<br>• Դպրոցի տեխնիկական հագեցվածության շնորհիվ գրեթե բոլոր ուսուցիչները ՏՀՏ-ներ են կիրառում դասերի ընթացքում, կազմակերպվում են առանձին բաց դասեր համակարգչային կաբինետներում՝ ինտերակտիվ տեխնոլոգիաների կիրառմամբ:<br>• Մանկավարժական համակազմում առկա են պետական պարգևներ և տարակարգ ունեցող, ինչպես նաև կամավոր ատեստավորում անցած ուսուցիչներ:<br>• Սկսնակ ուսուցիչների հետ մասնախմբի խմբի ղեկավարների հանձնարարությամբ տրամադրվում են մասնագիտական զարգացմանը նպաստող խորհրդատվություններ, նախապատրաստում են՝ մասնակցելու ատեստավորման վերապատրաստումների:<br>• Դպրոցը հանդիսանում է հանրակրթության պետական չափորոշչի ներդրման նպատակով վերապատրաստում իրականացնող կենտրոն, որտեղ վերապատրաստում են անցնում մարզի շուրջ 20 դպրոցի տնօրեններ, տնօրենի տեղակալներ և ուսուցիչներ: Գործընթացում որպես վերապատրաստողներ ներգրավված են նաև Դպրոցի տնօրենը և ուսուցիչները: | • «Տարվա լավագույն ուսուցիչ» և մասնագիտական այլ մրցույթ-ների, տարակարգի ստացման, կամավոր ատեստավորման մասնակցության պասիվություն: |

### *2.7. Ուսումնական հաստատության տրամադրած կրթության որակը՝ չափորոշչային պահանջներին համապատասխան.*

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| • Դպրոցում երաշխավորված է երեխաների՝ կրթություն ստանալու հիմնարար իրավունքը: Հետևողական աշխատանքներ են տարվում արդի կրթական մեթոդների կիրառման ու կրթական տեխնոլոգիաների տեղայնացման ուղղությամբ, փորձ է արվում՝ քայլելու ժամանակին համահունչ:<br>• Որակյալ կրթությանը զուգահեռ՝ մեծ ուշադրություն է դարձվում ռազմահայրենասիրական դաստիարակությանը, մարդկային արժեքների ամրապնդմանը, երեխաների ստեղծագործ կարողությունների բացահայտմանը:<br>• Մեծ աշխատանքներ են տարվում ուսման որակը բարելավելու, սովորողների հմտությունները, կարողություններն ու դիրքորոշումները զարգացնելու, առողջությունն ու անվտանգությունը պահպանելու ուղղությամբ:<br>• Վերջին տարիներին Դպրոցն ունեցել է հիմնական կրթության գերազանցության վկայականով, հանրապետական օլիմպիադաների մրցանակներով պարգևատրված աշակերտներ, մարզամշակութային հանրապետական մրցույթների հաղթողներ: Դպրոցի սան Արսեն Խաչատրյանը ուսումնառության տարիներին դարձել է բազկամարտի Եվրոպայի չեմպիոն:<br>• Շարունակաբար կազմակերպվում են դասարանական, արտադասարանական ու արտադպրոցական նպատակային միջոցառումներ, այցեր թանգարաններ և մշակութային ժամանցի կենտրոններ, որոնց շնորհիվ սովորողների մոտ զարգանում են ճանաչողական ակտիվությունը, գեղագիտական ճաշակը, մշակութային զարգացվածությունը: | • Միջազգային օլիմպիադաներին մասնակցության բացակայություն:<br>• Հանրապետական օլիմպիադաների մասնակցության ոչ բավարար արդյունքներ: |

***2.8. Ուսումնական հասփափության կողմից օգփագործվող ՏՀՏ և կրթական այլ փեխնոլոգիաները, կիրառվող նորարարությունները.***

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| • Դպրոցն ունի անհրաժեշտ տեխնիկայով համալրված համակարգչային 2 կաբինետ, որտեղ մշտապես կազմակերպվում են դասապրոցեսներ՝ ՏՀՏ կիրառմամբ:<br>• Ելնելով պրակտիկ դասերի կազմակերպման անհրաժեշտությունից՝ վերջին տարիներին համակարգչով, ինտերակտիվ գրատախտակով ու լուսացրիչով է համալրվել ինֆորմատիկայի՝ թվով երկրորդ համակարգչային կաբինետը:<br>• Դպրոցի ողջ տարածքն ապահովված է անլար և լարային ինտերնետային կապով, որը հնարավորություն է տալիս՝ Դպրոցի ցանկացած դասասենյակում օգտագործելու ՏՀՏ:<br>• Դպրոցն ունի քիմիայի, ֆիզիկայի և կենսաբանության լաբորատորիաներ: Քիմիայի և կենսաբանության լաբորատորիայի՝ նոր գույքով համալրումն ընթացքի մեջ է:<br>• Ինտերակտիվ դասերի կազմակերպման հնարավորություն է առկա նաև Դպրոցի գրադարան-ընթերցասրահում, որը հագեցած է լուսացրիչով, էլեկտրոնային գրատախտակով և համակարգչով: | • Դպրոցի լաբորատորիան ունի անհրաժեշտ քիմիական նյութերի և փորձերի իրականացման սարքավորումների կարիք:<br>• Սովորողների տեխնոլոգիական կրթությունը, գիտության, տեխնոլոգիայի, ինժեներության և մաթեմատիկայի (STEM) գիտելիքների խորացումն էապես կշահեն «Արմաթ» ինժեներական լաբորատորիայի ներդմամբ: |

*2.9. Ուսումնական հաստատության բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայր.*

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| • Դպրոցի անձնակազմի և շահառու այլ կողմերի գործուն ներգրավվածությամբ աշխատանքներ են տարվում սովորողների իրավունքների և շահերի պաշտպանու-թյան ուղղությամբ, առանձին քննարկումների ընթացքում ներկայացվում են սովորողների իրավունքներն ու պարտականությունները:<br>• Դպրոցում երաշխավորված են թե՛ աշակերտական, թե՛ ուսուցչամանկավարժական համակազմի ազատ կամաարտահայտության իրավունքները, բացառված են այլակարծությունը սահմանափակող գործոնները:<br>• Դպրոցի ողջ անձնակազմի կողմից աշխատանքներ են տարվում Դպրոցում բռնության ու հալածանքի (բուլինգ) ցանկացած ձևի կանխարգելման ուղղությամբ, սովորողների շրջանում բացատրական աշխատանքներ են տարվում ցանկացած հիմքով (արտաքին տեսքի, սոցիալական դրության, ծնողների կարգավիճակի, ազգային պատկանելիության) խտրական վերաբերմունքը բացառելու ուղղությամբ:<br>• Ապահովված են անձնակազմի առօրյա բնականոն գործունեության համար անհրաժեշտ անվտանգային, առողջապահական, սանիտարահիգիենիկ, հակահամավարակային պայմանները:<br>• Ուսուցչամանկավարժական անձնակազմի ուշադրության կենտրոնում է ԿԱՊԿՈՒ սովորողների հետ աշխատանքը, ուսումնական գործընթացում վերջիններիս լիքարժեք ներառումը. տպավորիչ են դպրոցի հոգեբանի կողմից տարվող աշխատանքները և նախաձեռնությունները:<br>• Դպրոցում առկա է սովորողների ինքնաարտահայտման ու ինքնադրսևորման, սոցիալական անհատի ձևավորման պայմանները: | • Սովորողների կողմից իրենց իրավունքների ու պարտականությունների իմացության ոչ բավարար մակարդակ:<br>• Դպրոցում կազմակերպվող միջոցառումներին ցածր մասնակցություն: |

***2.10. Ուսումնական հաստատության աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունները.***

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| • Ուսումնական հաստատությունը կառավարվում է կրթության գործում ուսուցչամանկավարժական անձնակազմի դերի արժևորման ու կարևորության գիտակցմամբ:<br>• Դպրոցի հնարավորությունների սահմաններում իրականաց-վում է գործունեության արդյունավետությամբ աչքի ընկած, ինչպես նաև մրցույթներում հաջողության հասած սովորողներ ունեցող ուսուցիչների խրախուսում:<br>• Դպրոցում ապահովված են անձնակազմի ինքնակրթու-թյան համար անհրաժեշտ ենթակառուցվածքները, խթանվում են տարբեր մրցույթների, վերապատրաստումներին և կամավոր ատեստացիայի մասնակցությունը: | • Ուսուցչամանկավարժական անձնակազմի ոչ բոլոր անդամների մոտ է առկա ինքնակատա-րելագործման և ինքնակրթության մոտիվացիայի բավարար մակարդակ:<br>• Կամավոր ատեստավորմանը մասնակցելու հետաքրքրվածության ոչ բավարար մակարդակ: |

***2.10. Ուսումնական հաստատության ուսումնական նպատակով կատարված ծախսերը.***

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| • Դպրոցի ֆինանսական հնարավորությունների սահմաննե-րում մշտապես ֆինանսներ են ուղղվում նյութատեխնիկական բազայով հագեցվածության բարձրացմանը, ՏՀՏ նոր միջոցների ձեռք բերմանը:<br>• Յուրաքանչյուր տարի ատեստավորման համար վերապատրաստվում է ուսուցիչների 20%-ը, որի նպատակով | • Հաշվի առնելով, որ Դպրոցի ծախսերի մեծ մասն ուղղվում է աշխատավարձի ու դրան հավասարեց-ված վճարներին, ինչպես նաև Դպրոցի պահպանման ծախսերին (էլեկտրաէներգիայի և բնական գազի սպառման դիմաց վճարներ, ընթացիկ վերանորոգում)՝ սահմանափակ են |

| | |
|---|---|
| Դպրոցի և վերապատրաստող կազմակերպությունների միջև կնքված պայմանագրերի հիման վրա կատարվում է վճարում: Վերջին տարիներին ուսուցիչների վերապատրաստումներին ուղղվել է միջինում 120,000 ՀՀ դրամ:<br>• Ուսումնական նպատակով կատարված ծախսերը միանշանակորեն նպաստել են ուսումնական դասապրոցեսի կազմակերպման արդյունավետության բարձրացմանը, որը, սակայն, հնարավոր չէ գնահատել թվային տվյալներով: | Դպրոցի նյութատեխնիկական բազայի հագեցվածությանը միջոցներ հատկացնելու հնարավորությունները: |

***2.11. Ուսումնական հաստատությունում առկա հիմնախնդիրները՝ ըստ առանձին ուղղությունների.***

| | |
|---|---|
| ***Շենքային պայմաններ*** | • Դպրոցի մեկ բակի վերանորոգում,<br>• Դպրոցի տարածքում գտնվող արհեստանոցի վերականգնման աշխատանքներ,<br>• Դպրոցի մարզադաշտի ցանկապատում և տարածքի բարեկարգում,<br>• Դպրոցի ապաստարանի բարեկարգում,<br>• Դպրոցի շուրջօրյա ջրամատակարարման կազմակերպում, |
| ***Նյութատեխնիկական բազա*** | • նոր գրականություն ձեռք բերելու անհրաժեշտություն,<br>• համակարգչային տեխնիկայի շարունակական թարմացում,<br>• էլեկտրոնային աղբյուրներից օգտվելու հնարավորությունների ստեղծում, |
| ***Կառավարման և խորհրդակցական մարմիններ*** | • շրջանավարտների խորհրդի ձևավորում,<br>• կառավարման, խորհրդակցական մարմինների հետ համագործակցության խորացում,<br>• խորհրդակցական մարմինների նախաձեռնողականության բարձրացում, |
| ***Մանկավարժական համակազմ*** | • Մասնագիտական որակների հետևողական բարձրացում և դասավանդման մեթոդների կատարելագործում,<br>• մասնագիտական մրցույթների (այդ թվում՝ տարակարգերի և կամավոր ատեստավորման) մասնակցության պատրաստակամության խթանում, |

| | |
|---|---|
| ***Աշակերտական համակազմ*** | • Սովորողների առաջադիմության բարձրացում, մասնագիտական կողմնորոշման աջակցություն դեռևս միջին դասարաններում,<br>• սովորողների մոտ ինքնակրթության և ինքազարգացման մոտիվիացիայի ստեղծում, |
| ***Ծնողական համակազմ*** | • դպրոցական և արտադպրոցական նախաձեռնություններին ծնողական համակազմի մասնակցության ցածր մակարդակ, սեփական նախաձեռնությունների պակաս,<br>• ծնողների կողմից էլեկտրոնային դասամատյաններում երեխաների առաջադիմության հսկողության պակաս, |
| ***Համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կողմերի հետ համագործակցություն*** | • քաղաքացիական հասարակության ոչ բավարար զարգացվածությամբ պայմանավորված՝ համայնքային մակարդակում կազմակերպվող նախաձեռնություններին մասնակցելու սահմանափակ հնարավորություններ,<br>• Դպրոց-հասարակություն գործընկերության ձևավորում: |
| ***Ուսումնական միջավայր*** | • սովորողների առօրյա ուսումնառության և ինքնակրթության մոտիվացիան խթանող հարափոփոխ միջավայրի ապահովում՝ ուղղված ոչ միայն ակադեմիական գիտելիքների ստեղծմանը, այլ նաև բազմակողմանի զարգացած երիտասարդ սերնդի կերտմանը: |
| ***Կրթության որակը*** | • հանրապետական և միջազգային օլիմպիադաներին մասնակցության ոչ տպավորիչ ցուցանիշներ, |
| ***Տեխնոլոգիաներ և նորարարություն*** | • առաջանցիկ զարգացող տեխնոլոգիաներին և նորարարությանը համահունչ քայլելու մարտահրավերներ, |
| ***Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր*** | • Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերի ոչ բավարար տեղեկացվածություն թե՛ աշակերտական, թե՛ ծնողական համակազմի շրջանում: |

## 3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ, ԽՆԴԻՐՆԵՐԻ ԵՎ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Ուսումնական հաստատության՝ 2023-2028 թվականների զարգացման ծրագրի ***նպատակներն են.***

1. Հանրապետության կրթական զարգացման ռազմավարություններին և տեսլականին համահունչ հանրակրթական գործընթացի ապահովում,
2. Որակյալ հանրակրթության ապահովում, որը կթողարկի արդեն միջին դասարաններից մասնագիտական կողմնորոշում ունեցող շրջանավարտներ,
3. Պետության, համայնքի ու հասարակության կարիքներին ու ազգային արժեհամակարգին համապատասխան սերնդի դաստիարակում,
4. Վաղ տարիքից երկրի ու համայնքի խնդիրներն ու հնարավորությունները գիտակցող պատասխանատու քաղաքացու տիպարի ձևավորում:

Սահմանված նպատակներին հասնելու համար սույն զարգացման ծրագրում սահմանվել և ձևակերպվել է համապատասխան ***խնդիրների*** շրջանակը, որն առանձին գործողությունների և միջոցառումների տեսքով ներկայացված է հաջորդիվ: Մասնավորապես, առանձնացվել են հետևյալ խնդիր-ուղղությունները.

1. Դպրոցի շենքային պայմանների և նյութատեխնիկական բազայի արդիականացում,
2. կրթության որակի և սովորողների առաջադիմության բարձրացում,
3. համագործակցության խորացում դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինների հետ,
4. ուսուցչամանկավարժական անձնակազմի կարողությունների զարգացում,

5. համագործակցության ընդլայնում պետական և համայնքային կառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների հետ,
6. ուսումնական միջավայրի բարելավում,
7. նորարարական ու ստեղծարար տեխնոլոգիաների տեղայնացում,
